ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՀԵՏ*

Ընթացիկ տարվա (1990 թ.) հոկտեմբեր ամսին լրացավ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, մեր պարբերականի բազմամյա խմբագիր, պատմաբան Մ. Գ Ներսիսյանի ծննդյան 80-ամյակը: Այդ կապակցությամբ ստորև տպագրում ենք հարցազրույց նրա հետ:

Հարց. *Որպես պատմաբան Ձեր գործունեությունը սկսել եք 1930-ական թթ.: Ի՞նչ կասեք այդ ժամանակաշրջանի պատմագիտության մասին:*

Պատասխան. *Հայտնի է, որ այդ տարիների խորհրդահայ պատմագիտության, ինչպես նաև հասարակական գիտությունների մյուս բնագավառներում իշխում էին դոգմատիկ սոցիոլոգիզմի դոգմաները: Հայ ժողովրդի պատմության հարցերը հիմնականում, մեծ մասամբ լուսաբանվում էին ոչ թե գիտական դիրքերից, այլ ղեկավար պաշտոնական շրջաններում ընդունված որոշումների ոգով: Շատ դեպքերում արհամարհվում էին փաստերը. կարևորը զգոնությունը և քաղաքական-ներկուսակցական հաշիվներն էին: Առանձնապես նենգափոխվում էին Հ. Հ. Դաշնակցության պատմության հետ կապված հարցերը: Բնորոշ է, որ 1928 թ. ՀԿԿ Կենտկոմի պլենումի ընդունած հատուկ որոշմամբ դաշնակցություն կուսակցությունը համարվեց բուրժուա-նացիոնալիստական, ֆաշիստական կուսակցություն: Հասկանալի է, որ այս պայմաններում դաշնակցության մասին գրող բոլոր հեղինակները միայն հայհոյում էին նրան: Դժբախտաբար ես ևս տուրք տվեցի այդ ընդհանուր տրամադրությանը: 20-24 տարեկան հասակում մեր օրթոդոքս ուսուցիչների ազդեցության տակ, նրանց ղեկավարությամբ լույս ընծայվեցին իմ մի շարք գրվածքները, որոնցում կրկնվում էին օրենքի ուժ ստացած հակադաշնակցական դոգմաները: Պետք է նկատել, որ ես,*

---

* *ՊԲՀ-ի հիմնադիր և բազմամյա խմբագիր ակադ. Մկրտիչ Ներսիսյանի ծննդյան 80-ամյակի օրերին (1990) «Հանդեսի» խմբագրական խորհուրդն ու աշխատակազմը պատրաստվում էին իրենց գնահատությունն ու երախտիքը հայտնել նրան՝ վերլուծական ծավալուն մի հոդվածով: Խմբագիրը, սակայն, մերժեց այդ և փոխարենը համաձայնվեց պատասխանել առաջադրված մի քանի հարցերի (ՊԲՀ, 1990, N 4, էջ 175–184):*

Այսօր, շուրջ մեկ տասնամյակ անց, երբ փորձում ենք հիշատակի խոսք ասել և հասկանալ կորուստը, արժե նորից, և ծանրութեթև անելով, կարդալ այդ մի քանի էջը. փաստորեն նա տալիս է հայագիտական մի ողջ սերնդի կենսագրություն, բացառիկ անկեղծությամբ անցուդարձեր ու դեմքեր հիշատակում, որոնք գոնե պատմաբանի համար անզանցառելի են: Առանց արժեքների այդ սանդղակի ճանաչման չպիտի կարողանանք հասկանալ այդքան մոտ անցյալը և աղավաղված պատկերացում պիտի ունենանք մեր արժանավոր մեծերի մասին:

ՊԲՀ-ի խմբագրություն

ինչպես և այլ սկսնակներ, դեռևս աղոտ դաղափար ունենալով շատ հարցերի մասին, ազնվորեն հավատում էինք մեր գրածներին: Բայց իմ սխալը ես հասկացա արդեն 30-ական թթ. վերջերին, որի հետևանքով դեռ այդ շրջանից դադարեցի զբաղվել դաշնակցական կուսակցության պատմության հետ կապված հարցերով: Ինձ համար պարզ դարձավ, որ հնարավոր չէր ճշմարիտ խոսք ասել այդ կուսակցության մասին: Սկսեցի զբաղվել հայ ժողովրդի XVIII և XIX դարերի պատմության հարցերով:

Հարկ է հիշել, որ պատմաբաններն ու բոլոր հայագետներն ընդհանրապես աշխատում էին մղձավանջային պայմաններում: Նրանք հաճախ ենթարկվում էին ջարդարար ստալինականների հարձակումներին ու հալածանքներին: Ահա մի բնորոշ օրինակ: 1931 թ. «Նոր ուղի» հանդեսի երկրորդ համարում հրապարակվեց պարտիական ղեկավար աշխատող Ադո Ադոյանի «Հակալենինյան իդեոլոգիայի ոտնձգությունների դեմ» հոդվածը, ուր մեր նշանավոր շատ հայագետներ հայտարարվեցին մարքսիզմ-լենինիզմի թշնամիներ: Հոդվածի հեղինակը գրում էր. «Հայաստանի ինտելիգենցիայի որոշ մասը՝ հանձինս հին և նոր պրոֆեսուրայի մի քանի ներկայացուցիչների, ուղղակի ռեակցիոն, ըստ էության կոնդրատևյան, բացահայտ նացիոնալիստական-բուրժուական արշավ է սկսել մարքսիզմ-լենինիզմի դեմ» (էջ 113): Իր այս միտքը հիմնավորելու նպատակով հոդվածագիրը ծանր, բայց չինծու մեղադրանքներ էր առաջ քաշում, օրինակ, մեր այնպիսի խոշոր հայագետների հասցեին, ինչպիսիք էին Հ. Մանանդյանը, Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանը և մյուսները: Բերենք մի քանի քաղվածք: «Պրոֆ. Մանանդյանի հին Հայաստանի պատմության ծրագիրն. ամբողջապես կազմված է պատմության բուրժուական նացիոնալիստական կոնցեպցիայի հիման վրա: Էջմիածնական և դաշնակցական պատմագրության թեղերն այս ծրագրում փայլում են: Ծրագրում գլխավոր տեղը բռնում են աղգերի կռիվները Հայաստանում, իսկ դասակարդերը և դասակարգային պայքարը չքացել են: Ակնհայտ է, որ պրոֆ. Մանանդյանի պատմական կոնցեպցիան չի կարող տեղ դտնել մեր ԲՈՒՀ -երում: Անհրաժեշտ է ծավալուն պայքար սկսել պատմության նացիոնալիստական դաշնակցական մեկնաբանության դեմ» (էջ 119):

Բոլորիս հայտնի Հր. Աճառյանի մասին ասված էր. «...Լեզվի տեսության դասատու Հ. Աճառյանը ամեն առիթով պաշտպանում էր ռեակցիոն մետաֆիզիկան և հարձակվում դիալեկտիկական մատերիալիզմի վրա: Եվ զարմանալին այն է, որ մինչև օրս էլ մեր ԲՈՒՀ-երի երիտասարդության դաստիարակությունը վստահում են բացահայտ իդեալիստ Աճառյանին... թե որ աստիճանի է հասնում բուրժուական ռեակցիոն այս իդեալիստի ատելությունը դեպի մարքսիզմը, այդ հանրահայտ է: Բայց ցավն այն է, որ մենք այս նացիոնալիստ-իդեալիստ Աճառյանների դեմ չենք ծավալել իսկական հեղափոխական պայքար: Մի եզրակացություն կարող է լինել: Պետք է մաքրել մեր ԲՈՒՀ-երը Աճառյանի տիպի «գիտնականներից»: Վեր-

ջապես ժամանակն է, որ գործնական դիալեկտիկայի լեզվով խոսենք լեզվագետ իդեալիստների հետ» (էջ 122):

Քաղաքական ինչպիսի պրովոկացիա, ինչ ամբարտավանություն: Հայագիտության հետ կապ չունեցող հեղինակը Աճառյանին համարում է չակերտավոր դիտնական: Մ. Աբեղյանին տրվում էին «նացիոնալիստ» ու «հետևողական իդեալիստ» պիտակները: Նույն ոգով խոսվում էր Գ. Ղափանցյանի, Ա. Տերտերյանի և մյուսների մասին: Ագոյանի նմանների թիվը քիչ չէր: Կատարելով վերիններին կամքն ու ցանկությունը, երբեմն ելնելով անհատական միտումներից, նրանք ահ ու սարսափի մեջ էին պահում մեր մտավորականությանը ու ամեն կերպ վարկաբեկում նրան:

Պատմաբանների, գրականագետների ու գրողների դեմ նոր, ավելի կազմակերպված գրոհ սկսվեց 1936-1937 թթ., այդ տարիներին, ինչպես հայտնի է, բանտարկվեցին հարյուրավոր ու հազարավոր անմեղ մարդիկ: Այսպիսի պարագաներում պարզ է, որ մեծապես տուժում էր իսկական պատմագիտությունը:

Հարց. *Որքան ինձ հայտնի է, ստալինյան ռեժիմի ժամանակ Դուք ևս ենթարկվել եք հետապնդումների: Ի՞նչ կասեք այդ մասին:*

Պատասխան. *Կոնկրետ լինելու համար խոսեմ փաստերով, բերեմ մի քանի օրինակ: 1935 թ. լույս տեսավ «Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում» իմ գրքույկը, որտեղ ես լայնորեն օգտագործել էի Աղասի Խանջյանի հոդվածները: Այդ և մի շարք «քաղաքական լուրջ սխալների» համար Խանջյանի հակառակորդները հարձակում սկսեցին նաև իմ գրքույկի դեմ: Պատմաբան Վ. Պարսամյանը Ստալինի ու Բերիայի անուններով ուղարկած իր նամակներում նրանց ուշադրությունը հրավիրեց այդ «բուրժուա-նացիոնալիստական աշխատության վրա»: Հարցը քննվեց ոչ միայն կուսակցական սկզբնական կազմակերպությունում, այլև շրջկոմում և անդամ կենտկոմի պլենումում: Գաղափարական հարցերի մասին Կենտկոմի պլենումի ընդունած բանաձևի մեջ գրքույկը որակվեց որպես «նացիոնալ-ուկլոնիստական, սպեցիֆիկյան դիրքավորումներ պարունակող բրոշյուր» (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1 փետրվարի 1936, N 25): Պլենումի բանաձևում միաժամանակ ասվում էր. «Կենտկոմի պլենումը պարտավորեցնում է կուսակցության քաղկոմներին ու շրջկոմներին հատուկ ուշադրություն նվիրել կուսակցության պատմության և ընկեր Բերիայի «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» զեկուցման հետագա ավելի խորն ուսումնասիրման հարցերին» (նույն տեղում):*

Հարցին արձագանքեց նաև պարբերական մամուլը: «Խորհրդային Հայաստան» և «Коммунист» թերթերում տպագրվեց ՀԿԿ Կենտկոմի ադիտացիայի բաժնի վարիչ Լ. Արիսյանի ծավալուն հոդվածը, որը ուներ «Ներսիսյանի «Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում» գրքի շուրջը» վերնագիրը: Հոդվածագիրը նշում էր, որ Ներսիսյանը, հետևելով

Ս. Կասյանին, Աշ. Հովհաննիսյանին և ուրիշներին, պրոպագանդում է սպեցիֆիկյան տեսակետներ: «Սպեցիֆիկ պատմաբաններն ստեղծել են մի ամբողջ գրականություն, որտեղ Հայաստանի հեղափոխական շարժումների և երկրում խորհրդային իշխանություն հաստատելու պատմությունը կտրված է Անդրկովկասի և Ռուսաստանի հեղափոխական շարժումների պատմությունից: Այդպես է վարվում նաև ընկեր Ներսիսյանը» («Խորհրդային Հայաստան», 26 հունվարի 1936 թ., N 20): Հոդվածում մեղադրանք էր ներկայացվում այն մասին, որ գրքույկում «անտեսվում ու լռության է մատնվում... ընկերներ Լենինի և Ստալինի դերն Անդրկովկասի ու Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների, հեղափոխական շարժումների ու աշխատանքի ղեկավարման գործում» *(ընդգծումները մերն են- Մ. Ն.): Գրքույկի հրատարակությունը, եզրակացնում էր հոդվածագիրը, ցույց է տալիս, որ կուսակցական կազմակերպությունները «գեռ ըստ էության չեն վերակառուցել իրենց աշխատանքը , ինչպես հարկն է չեն մտածել ընկեր Բերիայի զեկուցման վրա և իրենց մոտ անհրաժեշտ եզրակացություններ չեն արել: Դա դալիս է կրկին հաստատելու, որ դեռ թույլ է առանձին աշխատողների զգոնությունը և դրա շնորհիվ լենինիզմին խորթ ու թշնամի ազդեցությունները, տվյալ դեպքում սպեցիֆիկյան դրույթները, հնարավորություն են ստանում թափանցելու մեր կուսակցական պատմական գրականության մեջ» (նույն տեղում):*

Քանի գեռ Ա. Խանջյանը զբաղեցնում էր Հայաստանի ԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, գրքույկի քննադատությունն ուներ համեմատաբար «չափավոր» բնույթ: Բայց երբ 1936 թ. երկրորդ կեսին Խանջյանը հայտարարվեց «ժողովրդի թշնամի», ապա ստալինյան-բերիական էքստրեմիստները խիստ աշխուժացան, ես մեղադրվեցի ամեն տեսակի հանցանքների մեջ: 1937 թ. հունիսին ինձ հեռացրին կուսակցությունից (կուս. թեկնածու էի): «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակվեց Ա. Կ.-ի հոդվածը, ուր ասված էր. «Երևանի կուսպատմության ինստիտուտի սկզբնական կուսկազմակերպության և քաղաքային ռայկոմի բյուրոյի որոշմամբ կուսակցության շարքերից վտարվեցին Գարեգին Սարգսյանը և Մկրտիչ Ներսիսյանը... Մկրտիչ Ներսիսյանը կուսակցությունից թաքցրել է իր ծնողների հակահեղափոխական լինելը (հայրը 1920 թվականին ակտիվ կերպով կռվել է խորհրդային իշխանության դեմ, եղել է առևտրական, ձայնազուրկ և մինչև 1928 թ. շահագործել է ուրիշների աշխատանքը): Աշխատելով կուսպատմության ինստիտուտում Ներսիսյանը կատարելով ժողովրդի թշնամի Խանջյանի պատվերը ջանացել է ամեն կերպ կեղծել, ֆալսիֆիկացիայի ենթարկել Հայաստանի կուսակցական կազմակերպությունների ու քաղաքացիական կոիվների պատմության վերաբերյալ փաստաթղթերը, բացահայտ հակահեղափոխական տրոցկիստական դաշնակցական կոնտրաբանտ է անցկացրել »Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում« իր գրքույկում, մի գրքույկ, որ իր՝ Ներսիսյանի խոստովանու-

թյամբ, գրվել է Խանջյանի հանձնարարությամբ և նայվել ու վավերացվել է Խանջյանի կողմից և որն ըստ էության ուղղված էր կուսակցության պատմության մարքսիստական լենինյան լուսաբանման դեմ... Կուսակցության մեջ սողոսկած Գ. Սարգսյանը և Մ. Ներսիսյանը, մարքսիստ պատմաբանի դիմակ հագած, խցկվելով կուսպատմության ինստիտուտը քիչ վնասներ չեն հասցրել մեր գաղափարական ճակատի այդ կարևորագույն տեղամասում: Հակահեղափոխական կոնտրաբանտ անցկացնելու հետ միասին նրանք դիտավորյալ կերպով ձգձգել և ձախողել են Հայաստանի քաղաքացիական կռիվների և կուսակցական կազմակերպությունների պատմությանը նվիրված գիտական մարքսիստական գրականության հրատարակումը, սաբոտաժ կազմակերպելով այդ ուղղությամբ» *(տե՛ս «Խորհրդային Հայաստան», 26 հունիսի 1937, N 144):*

Ջարդարարական բնույթի հոդվածներ լույս տեսան նաև մյուս թերթերում: Մեծ եռանդ գործադրեց հատկապես «Ավանգարդը», ուր հրապարակված հոդվածներից մեկը ուներ «Մաքրել համալսարանը թշնամական տարրերից» խորագիրը: Այստեղ «երդվյալ թշնամիներ» հայտարարվեցին պրոֆեսորներ Գրիգոր Ղափանցյանը, Գրիգոր Զուբարը, Վահան Ռշտունին, Առրեն Մարկոսյանը, Հակոբ Զորյանը, Սիմոն Հակոբյանը, Գուրգեն Սևակը և ուրիշները: Թշնամիների ցուցակում կար և իմ ազգանունը, քանի որ այդ ժամանակ ես համատեղության կարգով որպես ասիստենտ աշխատում էի համալսարանում (տե՛ս «Ավանդարդ», 6 հոկտեմբերի 1937):

Հեռացնելով կուսակցությունից ինձ ազատեցին նաև աշխատանքից: Մոտ մեկ տարի մնացի անգործ, օգնում էին հարազատները, վաճառում էի չնչին գներով գրադարանիս գրքերը: Իհարկե, ընդունեցի «սխալս», չնայած դրան ամեն գիշեր սպասում էի ՊԱԿ-ի ներկայացուցիչներին: Բայց տեղի ունեցավ անսպասելին: 1938 թ. մարտին Սովետական Միության կոմկուսի Կենտկոմի պլենումում արտասանած իր ճառում Ստալինը հայտարարեց, որ կագրերի հարցում պետք է զգույշ լինել, որ զավակները պատասխանատու չեն ծնողների համար և այլն: Մեծ ստախոսի և երկերեսանու այս խոսքերի շնորհիվ շատ մարդիկ, թեկուզ և ժամանակավորապես, ազատվեցին հետապնդումներից: Դրանց թվում ես էլ վերականգնվեցի կուսակցության մեջ, աշխատանքի անցա ԽԱՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի պատմության ինստիտուտում:

Խոսելով 1930-ական թթ. մասին ես ավելորդ չեմ համարում կանգ առնել մի այսպիսի փաստի վրա: 1930 թ. Երևանի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, ՀԿԿ Կենտկոմին կից կուսպատմության ինստիտուտի տնօրեն, պրոֆ. Կարո Ղազարյանի առաջարկով նույն համալսարանի պատմության ֆակուլտետի երկու ուսանողներ՝ Մ. Ներսիսյանը և Վ. Պարսամյանը, սկսեցին հավաքել արխիվային և այլ նյութեր, նպատակ ունենալով կազմել ու հրապարակել փաստաթղթերի ժողովածու նվիրված 1920 թ. մայիսյան ապստամբության պատմությանը: Աշխատանքը կա-

տարվեց պրոֆեսորի ղեկավարությամբ 1930-1931 թթ., այսինքն այն ժամանակ, երբ ես 20-21 տարեկան ուսանող էի: Ժողովածուն լույս տեսավ 1932 թ. «Առաջին մասսայական հեղափոխական շարժումը Հայաստանում» խորագրով: Գրքի վերջում տեղավորված են ծանոթագրություններ, որոնք կազմել են պրոֆ. Կ. Ղազարյանը և ուսանողներ Մ. Ներսիսյանը ու Վ. Պարսամյանը (տե՛ս էջ 70): Գրքում գժբախտաբար չկա նշում այն մասին, թե նրանցից որը ինչ է գրել, բայց դժվար չէ կռահել, որ այն ծանոթագրությունները, որոնցում տրված են Հ. Հ. Դաշնակցություն կուսակցության գործիչների գնահատականները (բավական գժվար գործ) կարող էր գրել ժողովածուի խմբագիր պրոֆեսորը և ոչ թե գեռ նոր միայն գրիչ բռնող ուսանողը: Ինչո՞ւ եմ խոսում այս մասին: Բանն այն է, որ մեր օրերի անհատական հաշիվներ մաքրող մի շարք «ասպետներ», որոնք իրենց դիլետանտության համար քննադատության են ենթարկվել իմ խմբագրությամբ լույս տեսնող «Պատմա-բանասիրական հանդեսում», այսօր փորձեր են անում նշված ծանոթագրություններում տեղ գտած սխալների ու գռեհկությունների մեղքը բարդել ուսանող Ներսիսյանի վրա, ոչ մի խոսք չասելով ո՛չ գրքի խմբագիր պրոֆեսորի և ո՛չ էլ Վ. Պարսամյանի մասին: Այսօրվա ընթերցողից թաքցվում է նաև այն, որ 1930-ական թթ. Հայաստանում անհնարին էր գրել այլ կերպ: Պարզ է, որ վիրավորված ինքնասիրությունը դիմում է անբարեխղճության: Նկատեմ, որ պրոֆ. Կ. Ղազարյանը՝ համեստ ու աշխատասեր այդ պատմաբանը, տարիներ հետո ենթարկվելով չարամիտ ամբաստանության, բանտարկվեց ու աքսոր ուղարկվեց:

Բայց վերադառնանք ձեր հիմնական հարցին: 1940 թ. լույս տեսավ «Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում» իմ գրքույկը, որի պատճառով ես նորից հարձակումների ենթարկվեցի մոտ 14 տարի շարունակ: Հենվելով արխիվային փաստաթղթերի և եղած գրականության վրա, ես այդ գրքում այն տեսակետն եմ զարգացրել, որ Հ. Հ. Դաշնակցություն կուսակցության կազմավորման գործում կարևոր դեր խաղացին 1870–1880-ական թթ. գործող հայ ազգային նարոդնիկական խմբերն ու կազմակերպությունները, որոնց մեջ ընդգրկված էին ռուսական նարոդնիկական գաղափարներով ոգևորված բազմաթիվ հայ դեմոկրատ ու հեղափոխական երիտասարդներ՝ Քրիստափոր Միքայելյանը, Սիմեոն Զավարյանը, Ստեփան Զորյանը, բժիշկ Լորիս-Մելիքյանը (կոմս Լորիս-Մելիքովի եղբոր տղան) և ուրիշներ: Զգաստ և օրթոդոքս «ասպետները» նորից աղմուկ բարձրացրին: Աշխատության հեղինակը մեղադրվեց այն բանում, որ հակառակ կուսակցության որոշումների, Դաշնակցություն կուսակցությունը համարում է դեմոկրատական-հեղափոխական: Ամբաստանագրեր ուղարկվեցին ՀԿԿ - Կենտկոմին և ԽՍՀՄ կոմկուսի Կենտկոմի գլխավոր տեսական օրգան հանդիսացող «Բոլշևիկ» պարբերականին: Նորից հանձնաժողովներ, նորից քննարկումներ, մեղադրանքներ, հանդիմանություններ: Տարիներ հետո՝ 1948 թ., այդ հարցը նորից բարձրացավ: Մոսկվայում լույս տեսնող «Пи-

тературная газета» թերթում հրապարակվեց փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Կարապետյանի «Ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի մնացուկների» հոդվածը, ուր ասված է, որ իմ աշխատությունը գրված է նացիոնալիստական դիրքերից, քանի որ Դաշնակցություն կուսակցության շատ հիմնադիրների ես համարում եմ նարոդնիկական-դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչներ: Կարապետյանի կարծիքով ոչ մի կապ չի եղել նարոդնիկների և դաշնակների միջև, որոնք (դաշնակները) նրա կարծիքով եղել են ծայրահեղ (отъявленные) նացիոնալիստներ: Հոդվածագիրը ավելացնում էր, որ Ներսիսյանը ռեակցիոն Մխիթարյաններին համարում է լուսավորիչներ: Իսկ դա վկայում է այն մասին, որ Ներսիսյանը «ավելի աջ է քան բուժուական լիբերալները» (տե՛ս «Литературная газета», 31 հուլիսի 1948, N 61):

Չմոռանամ նշել, որ Ա. Կարապետյանի հոդվածում բուրժուական նացիոնալիզմի, իդեալիզմի ու հակալենինիզմի մեջ մեղադրվեցին նաև Մանուկ Աբեղյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Հովհաննես Շիրազը, Սողոմոն Տարոնցին, Խաչիկ Դաշտենցը, Վ. Խեչումյանը, Ա. Ջիվելեգովը, Հ. Կուսիկյանը, Խ. Սարգսյանը, Ռ. Զարյանը, Մ. Մկրյանը, Ե. Տեր-Մինասյանը, պրոֆեսորներ Վ. Զալոյանը, Ա. Ադամյանը և ուրիշներ:

Նարոդնիկության մասին գրված իմ այդ աշխատության «վնասակարության» մասին նորից խոսեցին 1952-1953 թթ., այսինքն այն տարիներին, երբ մեր հանրապետությունում լայն սլայքար ծավալվեց այսպես կոչված բուրժուա-նացիոնալիստական միասնական հոսանքի դեմ: Ահա, օրինակ, ինչ գրվեց ՀԿԿ Կենտկոմի օրգան «Պարտիական կյանք» ամսագրում. «Պրոֆ. Մ. Ներսիսյանը 1940 թ. հրատարակած իր «Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում» գրքում սխալ գնահատական է տալիս 80-ական թվականների քաղաքական խմբակներին: Նա հայկական բուրժուանացիոնալիստական խմբակները, որոնցից հետագայում կազմակերպվեց Դաշնակցություն պարտիան, հայտարարում է նարոդնիկական, ոնոլյուցիոն խմբակներ» (տե՛ս «Պարտիական կյանք», 1953, N 2, էջ 47):

Իմ դեմ քաղաքական մեղադրանքները առաջ քաշվեցին նաև երկու տարի հետո՝ 1954-1955 թթ.: Այս անդամ գաղափարական ճակատը «վնասակար» մտքերից ազատելու հոգսը իր վրա վերցրեց պարտբյուրոկրատիայի բավական ագրեսիվ ներկայացուցիչներից մեկը՝ Շմավոն Առուշանյանը, որ այդ տարիներին վարում էր ՀԿԿ Երևանի քաղաքային կազմակերպության առաջին քարտուղարի պաշտոնը: Պատմության հաշվերից բոլորովին անտեղյակ այդ մարդուն օգնության եկան մի շարք պատմաբաններ (և առաջին հերթին նորից Վ. Ա. Պարսամյանը): Հարցը քննարկվեց կուսակցության քաղաքային կոմիտեում, ընդունվեց որոշում գրադարաններից հավաքել ու ոչնչացնել իմ դիրքը: Երկար չարչարվելուց հետո ինձ հաջողվեց ՀԿԿ Կենտկոմի գիտության բաժնի վարիչ Ռ. Խաչատրյանի հետ միասին համոզել Կենտկոմի բյուրոյի անդամներին չհաստատել քաղկոմի այդ որո-

շումը: Անհետևանք անցան Առուշանյանի փորձերը ինձ՝ որպես նացիոնալիստի կուսակցությունից հեռացնելու ուղղությամբ:

Խիստ քննադատության ենթարկվեցի ես նաև իմ մի այլ աշխատության կապակցությամբ: 1946 թ. ապրիլին Հանրապետության Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում պաշտպանեցի դոկտորական դիսերտացիա «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական դեսպոտիզմի դեմ (1850-1870 թթ.)» թեմայով: Այդ, իհարկե, համարձակ ու վտանգավոր քայլ էր, քանի որ հակառակ իշխող հակագիտական դոգմաների ես այդ աշխատության մեջ վեր էի հանել արևմտահայության ինքնաբուխ ժողովրդական ազատագրական շարժումը ուղղված օսմանյան լծի դեմ, բարձր գնահատական տվել Մ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի, Մ. Խրիմյանի, Ռ. Պատկանյանի, Գր. Արծրունու ու ժողովրդի ազատագրական իղ-



Մ. Մելիքյան, Մ. Ներսիսյան, Արմին Վեգներ, Մ. Մկրյան

ձերն արտահայտող մյուս փայլուն գործիչների հայրենասիրական գործունեությանը: Հասկանալի է, որ շուտով նորից մեղադրվեցի նացիոնալիզմի մեջ, ամբաստանագրեր ուղարկվեցին միութենական բարձրագույն կրթության ատեստացիոն հանձնաժողովին ու ՀԿԿ Կենտկոմին: Ի վերջո բանիմաց և հեղինակավոր մի շարք գիտնականների կողմից տրված կարծիքների հիման վրա հաստատվեց իմ դիսերտացիան, իսկ ՀԿԿ Կենտկոմի քարտուղարությունը սահմանափակվեց միայն բանավոր դիտողություններով:

Հարցը չբարդացավ շնորհիվ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գր. Հարությունյանի բարյացակամ միջամտության:

Սակայն ավելի ուժեղ հարձակումներ եղան մի քանի տարի հետո: Հայտնի է, որ 1952 թ. վերջերին և 1953 թ. սկզբներին Խորհրդային Միության մեջ բարձրացավ ստալինյան տեռորի ու հալածանքների մի նոր ալիք, որն իր արձագանքը գտավ նաև Հայաստանում: Խորհրդահայ շատ պատմաբաններ ու գրականագետներ մեղադրվեցին բուրժուական «միասնական հոսանքի» տեսությունը և նացիոնալիստական այլևայլ գաղափարներ պրոպագանդելու մեջ: Սկսվեց խաչակրաց արշավանք «հանցագործների» դեմ: Հրապարակվեցին բազմաթիվ «մերկացնող» հոդվածներ, տեղի ունեցան տարբեր կարգի քննարկումներ, ընդունվեցին համապատասխան որոշումներ և այլն: Իհարկե, «չրջանառության» մեջ առան նաև ինձ: Այսպես. ՀԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղարի հոդվածում, տպագրված Կենտկոմի օրգան «Պարտիական կյանք» ամսագրում ասված է. «Պրոֆեսոր Մ. Ներսիսյանը, իր «Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում» գրքում և «Հայ ազգային ազատագրական շարժումը 19-րդ դարի 60–80-ական թվականներին» ձեռագիր աշխատությունում (նկատի ունի 1946 թ. պաշտպանած իմ դոկտորական դիսերտացիան – Մ. Ն.) հակառակ ազգային ազատագրական շարժման վերաբերյալ մարքսիստական-լենինյան ուսմունքի, փորձում է ապացուցել, թե այդ ժամանակաշրջանի շարժումը գյուղացիական–դեմոկրատական բնույթ է կրել, մինչդեռ այդ շարժումները եղել են բուրժուական շարժումներ: Բուրժուական նացիոնալիստական իդեոլոգներին, այդ թվում Ռաֆֆուն, Պատկանյանին և մյուսներին նա համարում է հայ գյուղացիության շահերի արտահայտիչներ: Գնահատական տալով անցյալ դարի 80-ական թվականների հայ քաղաքական խմբակներին՝ պրոֆեսոր Մ. Ներսիսյանը հայ բուրժուական խմբակները դիտում է որպես դեմոկրատական ոնոլյուցիոն խմբակներ, իսկ նրա իդեոլոգներին համարում է դեմոկրատ գործիչներ» *(«Պարտիական կյանք», 1953, N 1, էջ 34):*

Իսկ մի ուրիշը՝ հիշված պարբերականի խմբագիրը գրում էր. «Լուրջ սխալներ կան Ներսիսյանի դոկտորական չտպագրված դիսերտացիայում: Նա փոխանակ բացահայտելու Արծրունու, Ռաֆֆու, Պատկանյանի բուրժուական նացիոնալիզմը նրանց դասում է պրոգրեսիվ-դեմոկրատական գործիչների շարքը... սխալ է գնահատում հայ ազգային շարժումների սոցիալ-դասակարգային էությունը, այդ շարժումները ներկայացնելով իբրև ժողովրդական-գյուղացիական շարժումներ» *(«Պարտիական կյանք», 1953, N 2, էջ 47–48):*

Նույն ոգով հոդվածներ տպագրվեցին գրեթե բոլոր պարբերականներում: «Սովետական Հայաստան» թերթը, օրինակ, հրապարակեց մի ընդարձակ խմբագրական, որի վերնագիրն էր. «Արմատախիլ անել բուրժուա-նացիոնալիստական իդեոլոգիայի ամեն մի դրսևորում պատմագրության և գրականագիտության մեջ»: Այստեղ ևս ի թիվս շատերի (Աշ. Հովհաննիս-

յանի, Ա. Տերտերյանի, Վ. Ռշտունու և մյուսների) բուրժուական նացիոնալիստ հայտարարեցին նաև ինձ: Թերթը գրում էր. «Պրոֆ. Մ. Ներսիսյանը հետևելով բուրժուա-նացիոնալիստական տրադիցիաներին, իր «19-րդ դարի 60–80-ական թվականների ազգային ազատագրական շարժումը» դոկտորական դիսերտացիայում, հակառակ մարքսիզմ-լենինիզմի այն դրույթին, որ ազգային շարժումները կապիտալիզմի ժամանակաշրջանում իրենց էությամբ բուրժուական են, փորձում է հայ ազգային շարժումները ներկայացնել իբրև ժողովրդական դեմոկրատական շարժումներ...Նա դեմոկրատ է մկրտում այնպիսի բուրժուական նացիոնալիստների, ինչպիսիք են Պատկանյանը, Ռաֆֆին և ուրիշներ: *Պրոֆ. Մ. Ներսիսյանը գովաբանում է բուրժուական նացիոնալիզմի գաղափարախոս Գ. Արծրունուն և դրանով իսկ ապակողմնորոշում սովետական երիտասարդ պատմաբանների մի մասին, լուրջ վնաս հասցնելով նրանց գաղափարական դաստիարակությանը («Սովետական Հայաստան», 9 հունվարի 1953, N 7):*

Բուրժուական նացիոնալիզմի մեջ մեղադրվող հեղինակների գլխին կուտակվում էին սև ամպեր: Սակայն բարեբախտաբար 1953 թ. մարտի սկզբին իր հոդին ավանդեց մեծ դահճապետ Ստալինը: Դրությունը զգալիորեն փոխվեց: Շատերը փրկվեցին մահից, բանտից ու աքսորից: Իմ հարցը վերջացավ նրանով, որ ՀԿԿ կենտկոմի բյուրոյի որոշմամբ ես ստացա նկատողություն: Երկու տարի հետո՝ 1955 թ., Ն. Ս. Խրուշչովի ղեկավարության ժամանակ, վերջապես լույս տեսավ 1944–1946 թթ. շարադրված «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» իմ աշխատությունը որոշ կրճատումներով: Գրաքննության պահանջով կրճատվեց, օրինակ, ձեռագրի այն մասը, որտեղ խոսվում էր Խրիմյան Հայրիկի հայրենասիրական գործունեության մասին: 1965 թ. փետրվարին լույս տեսավ «Ժողովրդական հերոսը» խորագիրը կրող իմ հոդվածը, ուր խորհրդային կարգերում առաջին անգամ պատշաճ գնահատական տրվեց հայ ազգային-ազատագրական շարժման ամենափայլուն գործիչներից մեկին՝ Անդրանիկ Օզանյանին (տե՛ս «Սովետական Հայաստան», 25 փետրվարի 1965): Նույն թվականի ապրիլին Խորհրդային Միության ԿԿ կենտկոմի օրգան «Правда» թերթում հրապարակվեց իմ և պրոֆ. Ն. Ուշակովի համատեղ հոդվածը 1915 թ. Մեծ եղեռնի ու այլ ցեղասպանությունների մասին (տե՛ս «Правда», 25 ապրիլի 1965): Հարկ եմ համարում հիշել, որ նշված երկու հոդվածների հրապարակման գործում զգալի դեր խաղացին ՀԿԿ կենտկոմի քարտուղարներ Յա. Զարոբյանը և Հ. Բազդասարյանը: 1966 թ., խախտելով ընդունված «կարգն ու կանոնը», ինձ հաջողվեց լույս ընծայել «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ» ծավալուն ժողովածուն (ռուսերեն), որը թեև կազմված էր շատ տարիներ առաջ, բայց երբեք չէր հանձնարարվում տպագրության համար: Այդ արժեքավոր գրքի հրապարակման կապակցությամբ ես՝ մեղավորս, գրավոր բա-

ցատրություն տվեցի վերադաս օրգաններին: Լավ էր, որ հարցը վերջացավ դրանով:

Ավելացնեմ, որ նացիոնալիզմի ու հակամարքսիզմի մեջ ես մեղադրվեցի նաև 1974–1975 թթ.: Այս անգամ դատախազի դերում հանդես եկավ Հայկական մանկավարժական ինստիտուտի դասախոս Շ. Հարությունյանը, որի խիստ մակերեսային ու բացահայտորեն կոմպիլյատիվ դիսերտացիայի մասին ես անվանի սլատմաբան Աշ. Հովհաննիսյանի հետ միասին առիթ էի ունեցել իմ բացասական կարծիքն արտահայտել հրապարակայնորեն տարիներ առաջ և «Պատմա-բանասիրական հանդեսում» տպագրել Վ. Ոսկանյանի քննադատական խոսքը նրա պատմագիտական պարզունակ մարզանքների մասին (տե՛ս ՊԲՀ, 1964 թ., N 4, էջ 268–269): Գիտական քննադատությանը Հարությունյանը պատասխանեց քաղաքական դեմագոգիայով: Ամեն ճիգ գործադրելով նա աշխատեց ցույց տալ, որ իմ խմբագրությամբ 1972 թ. Երևանի պետական համալսարանի կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն» համառոտ ակնարկը (մեկ հատորյակը), որի մասին տպագրվեց հինգ դրական գրախոսություն, ոչ ավել, ոչ պակաս հակամարքսիստական ու նացիոնալիստական դիրք է: Գռեհիկ սոցիոլոգիզմի կողմնակից մի շարք ղեկավար մարդկանց օգնությամբ նա տպագրեց կիսագրագետ, բայց «սուր զգոնությամբ» հագեցված մի գրախոսական «Լենինյան ուղիով» ամսագրում, դիմումներ գրեց ՀԿԿ Կենտկոմի քարտուղարներին, և անգամ Սովետական Միության կոմկուսի ոչ անհայտ լիդերներից մեկին՝ տխրահռչակ Մ. Ա. Սուսլովին, դաժան, օգիոզ մի մարդու, որը տարիներ շարունակ քարացրել էր երկրի գաղափարական կյանքը: Ջարդարար լիդերին ուղղված 1975 թ. նոյեմբերի 27 թվակիր նամակում, որի մի պատճենը պահպանվում է իմ թղթերում, Հարությունյանը ամեն տեսակի քաղաքական մեղադրանքներ էր բարդում խմբագրի ու հեղինակների վրա: Այսպես, ամբաստանագրում ասված է. «Գրքում բացակայում է պատմության մարքս-լենինյան պերիոդիզացիան», այնտեղ չի խոսվում Բաքվի կոմունայի մասին, չեն հիշատակված «մեզ համար շատ սուրբ անուններ», այդ թվում Օրջոնիկիձեն, Կիրովը, Խախանյանը, Վելիկանովը, Աթարբեկյանը և ուրիշներ: Հարությունյանը «սուրբ անուն» էր համարում մասսայական տեռորների կազմակերպիչ, դաժան մարդասպան Գևորգ Աթարբեկյանին: Սուսլովի ուշադրությունը հրավիրվում էր մինչև իսկ այն հանգամանքի վրա, որ միջնադարյան հռչակավոր հայ բժիշկ Ամիրդովլաթի մասին գրքում ավելի շատ է խոսվում, քան Անդրֆեդերացիայի կազմակերպման պատմության մասին: Ամեն առիթով քաղաքական մեղադրանքներ: Իր դիմում-մատնագրի վերջում Հարությունյանը խնդրում էր Ջարդարար Սուսլովի միջամտությունը: Իհարկե, կազմվեցին հանձնաժողովներ, կատարվեցին քննարկումներ և միայն անվանի գիտնականների հիմնավոր կարծիքների և համալսարանի դիտական խորհրդի համապատասխան որոշման շնորհիվ տեղի չունեցան նոր հետապնդումներ:

Հարց. *Ինչպիսի՞ն եղել ձեր գիտական-կազմակերպչական ու դասախոսական աշխատանքը անցյալում:*

Պատասխան. *Եղել եմ հանրապետության ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն, նույն ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիայի փոխնախագահ (վիցեպրեզիդենտ): 1966-1977 թթ. վարել եմ Երևանի Պետական համալսարանի ռեկտորի պաշտոնը: Երկար տարիներ դասավանդել եմ հայ ժողովրդի պատմություն Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում և Երևանի համալսարանում:*

Հարց. *Արդեն 33-րդ տարին է, որ Դուք խմբագրում եք «Պատմա-բանասիրական հանդեսը», որը ինչպես բազմիցս նշվել է, դիտական մեծ հեղինակություն ունի ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Ի՞նչ կասեք ձեր պարբերականի մասին:*

Պատասխան. *Մեր հանդեսը, որ սկսել է լույս տեսնել 1958 թ. (տարեկան չորս հատոր), փաստորեն հայագիտական պարբերական է: Նրանում հիմնականում լուսաբանվում են հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության, գրականության, լեզվի ու մշակույթի այլ բնագավառների հարցերը: Սակայն այնտեղ տպագրվում են հոդվածներ նաև կովկասագիտության, բյուզանդագիտության ու արևելագիտության կարևոր պրոբլեմների վերաբերյալ: «Հանդեսին» աշխատակցում են ոչ միայն Հայաստանի, այլև Խորհրդային Միության ու արտասահմանյան շատ հայագետներ: Այսպես, օրինակ, օտարազգի գիտնականներից մեզ աշխատակցել են Բուլղարիայից Դ. Անգելովը, Վ. Գյուզելևը, Ռումինիայից՝ Վ. Բընըցյանուն (երկար տարիներ եղել է նաև խմբագրական խորհրդի անդամ), Իտալիայից՝ Ջ. Բոնֆանտեն, Վ. Պիզանին, Ֆրանսիայից՝ Ֆ. Ֆեյդին, Ամերիկայի Միացյալ Նահանգներից՝ Ջ. Գրեպինը, Ռ. Յակոբսոնը, Հոլանդիայից՝ Մ. Սթոունը, Բելգիայից՝ Ջ. Վայտենբերգը, Հունգարիայից՝ Է. Շյուցը, Գերմանիայից՝ Հ. Վալտեր Պոլը, Ռուսաստանից՝ Վ. Տոլորովը, Օ. Շիրոկովը, Տ. Իզմայլովան, Ուկրաինայից՝ Յա. Դաշկևիչը, Վրաստանից՝ Ի. Աբուլաձեն (եղել է նաև խմբագրության անդամ), Գ. Մելիքիշվիլին և շատ ուրիշներ: Պարբերականում հանդես են եկել ինչպես Հանրապետության, այնպես էլ սփյուռքի գրեթե բոլոր հայ անվանի հայագետները:*

Հասկանալի է, որ «Հանդեսը» ևս զերծ չի մնացել իր ժամանակ իշխող գռեհիկ սոցիոլոգիզմի ազդեցությունից: Բայց չնայած դրան նա հիմնականում կարողացավ պահել իր դիտական մակարդակը: Պատահական չէ, որ պարբերականը լավ ընդունելություն գտավ: Նրան բարձր գնահատական են տվել հայտնի գիտնականներ Հ. Օրբելին, Վ. Մինորսկին (Լոնդոն), Կ. Մելիք-Օհանջանյանը, Հ. Սիրունին (Բուխարեստ), Հ. Արմենը, Հ. Շալյանը (ԱՄՆ), Է. Գուլբեկյանը (Լոնդոն), Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների ներկայացուցիչները, մեր և սփյուռքի մամուլում հանդես եկած գրախոսները: 1987 թ., «Հանդեսի» 30-ամյակի առիթով խմբագրությունը

ստացավ Հայաստանի ԳԱ նախագահության հետևյալ նամակը, որը ստորագրել էր ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը. «Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը ողջունում է «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությանը «Հանդեսի» հրատարակության 30-ամյակի առթիվ: Անցած երեք տասնամյակների ընթացքում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Հանդեսը» իր շուրջն է համախմբել Սովետական Միության և արտասահմանյան առաջավոր գրեթե բոլոր հայագետներին, արդյունավետ աշխատանք է կատարել հայ ժողովրդի պատմության, դրականության, լեզվի, արվեստի, փիլիսոփայության և մշակույթի այլ բնագավառների կարևոր հարցերի ուսումնասիրության, արևելագիտության, կովկասագիտության, պատմագիտության ու բանասիրության տեսական մի շարք պրոբլեմների դիտական քննարկման, հարևան երկրների հետ Հայաստանի ունեցած տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերի ու փոխհարաբերությունների պատմության մեկնաբանման, սփյուռքահայ դիտական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի լուսաբանման ուղղությամբ: Մշտապես բարձր մակարդակի ձգտող «Հանդեսը» դարձել է հայագիտական ծանրակշիռ դիտական օրգան և համընդհանուր ճանաչում է ձեռք բերել մեր երկրում և նրա սահմաններից դուրս: ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը նշում է նաև ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի 30-ամյա արգասավոր գործունեությունը «Հանդեսի» անընդմեջ գլխավոր խմբագրի պաշտոնում»:

Իհարկե անելիքները դեռևս շատ են: Անհրաժեշտ է պահպանել ու ավելի բարձրացնել պարբերականի գիտական մակարդակը, վերացնել եղած թերությունները: Ժամանակն է թարմ, երիտասարդ ուժեր ներգրավել խմբագրական խորհրդում, ավելի համարձակորեն վերանայել պատմագիտության ու հասարակագիտական մյուս գիտություններում տեղ գտած հին, քաղաքական կուսակցություններին ու հոսանքներին սպասարկող և իսկական գիտության հետ աղերս չունեցող «տեսությունները»:

Հարց. Ձեր կարծիքը խորհրդահայ պատմագիտության այսօրվա վիճակի մասին:

Պատասխան. Ուրախալի է, որ այսօր մեր պատմաբանները լրջորեն գիտակցում են հայ ժողովրդի պատմության շատ հարցերի նորովի լուսաբանման անհրաժեշտությունը: Այսօր արդեն անվիճելի է այն տեսակետը, որ պատմագիտությունը պետք է ազատագրվի գռեհիկ սոցիոլոգիզմի դոգմաներից և հենվի միայն իրական փաստերի գիտական վերլուծության վրա: Վերջին ժամանակները լույս են տեսել մի շարք արժեքավոր գրքեր: Բայց միաժամանակ հրապարակվում են գրքեր, գրքույկներ, որոնք խիստ մակերեսային են և շատ հեռու գիտությունից: Լույս են տեսնում դիլետանտական, հակագիտական հոդվածներ հայ ժողովրդի ծագման, Հայկական հարցի, հայ ազատագրական շարժման պատմության և այլ հարցերի մասին: Որոշ հեղինակներ, հանգես բերելով բացահայտ անգիտություն,

փորձում են վարկաբեկել մեր ժողովրդի վերջին դարերի ազգային-ազատագրական շարժումը, նրա փայլուն ներկայացուցիչներին՝ Իսրայել Օրուն, Խաչատուր Արովյանին, Ներսես Աշտարակեցուն, զորավար Անդրանիկին և ուրիշներին: Դեռևս կան «գիտուններ», որոնք խոսելով XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին թուրքական բռնապետության դեմ ծավալված հայ ազատագրական շարժման մասին, աշխատում են ինչ-ինչ նկատառումներով ժխտել, նսեմացնել հայ ազգային քաղաքական կուսակցությունների՝ դաշնակցության, հնչակյանների ու արմենականների գործուն մասնակցությունը և ղեկավար դերը այդ ժողովրդական պայքարում: Զմոռանամ նկատել, որ վերահրատարակվում են գրքեր առանց անհրաժեշտ առաջաբանների ու ծանոթագրությունների (այս դեպքում ըստ երևույթին գլխավոր նպատակը շահույթ ստանալն է): Զարմանալի անտարբերություն են ցուցաբերում մեր պրոֆեսիոնալ պատմաբանները: Կարծում եմ, որ բանիմաց մասնագետները չպետք է զլանան իրենց հեղինակավոր խոսքն ասելու բոլոր այն դեպքերում, երբ փորձեր են արվում կեղծելու պատմական ճշմարտությունը, երբ նորից ջանքեր են թափվում ծուռ հայելու մեջ ներկայացնելու մեր ժողովրդի պատմությունը: Չպետք է մոռանալ անցյալի դասերը: